[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
22	Դեկտեմբեր	2022 թ.		Ա	5630345087
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
22	Դեկտեմբեր	2022 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	8 Փետրվար, 2022 թ.	թիվ ՀԳԴ-9-22 պայմանագրի

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 0 0 6 8 1 3
[9] Անվանումը	«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 0 0 6 8 1 3 / 1
[11] Բանկային տվյալները	ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ N 163288639103
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԹԱՂԱՄԱՍ Դ.ԱՆՀԱՂԹԻ Փ. 19/1 70
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 5 0 6 6 3 4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխ. գործառ. վարչություն N 900011180081
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր — Համար
	Լիազորագիր — Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

Հ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Հարակից
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ռոման Անատոլիի Նեպրեչինկոյի վերարկուպ 14.09.2022թ. դատական նիստ հայերեն-ռուսերեն-հայերեն բանավոր թարգմանություն	ժամ	1.5	4500		6750	20	1350	8100
2	Ալեքսեյ Վիտալիի Տիտովին վերարկուպ 26.09.2022թ. դատական նիստ հայերեն-ռուսերեն-հայերեն բանավոր թարգմանություն	ժամ	2	4500		9000	20	1800	10800
3	Նատալիա Անատոլիի Գերասիմովայի վերարկուպ 05.10.2022թ. դատական նիստ հայերեն-ռուսերեն-հայերեն բանավոր թարգմանություն	ժամ	1.5	4500		6750	20	1350	8100
4	Նատալիա Անատոլիի Գերասիմովայի վերարկուպ 08.12.2022թ. դատական նիստ հայերեն – ռուսերեն-հայերեն բանավոր թարգմանություն	ժամ	2.5	4500		11250	20	2250	13500
5	Անատոլի վերարկուպ 06.12.2022թ. դատական նիստ հայերեն-պարսկերեն-հայերեն բանավոր թարգմանություն	ժամ	2.5	6000		15000	20	3000	18000
Ընդամենը						48750	X	9750	58500

Դուրս գրող՝ APRIYAN EDUARD 2609850328

*Ստացող՝ GRIGORYAN SUSANNA 7403690397

անունը, ազգանունը

22/12/2022 20:59:39

անունը, ազգանունը

28/12/2022 15:00:17

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

14 սեպտեմբերի 2022թ. քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի պաշտոնակատար, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, ուսումնասիրելով ՌԴ իրավասու մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասի (խարդախություն) մեղադրանքով հետախուզվող, Ռոման Անատոլիի Նեգրեշնիկովին հանձնելու համար կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի, քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, 2022 թվականի փետրվարի 10-ին, Շարմ Էլ Շեյխ-Երևան թիվ 993 չվերթի ժամանումից հետո՝ հայտնաբերել և ժամը 09[15]-ին, բաժին են բերման ենթարկել, Ռուսաստանի Դաշնության Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) ներքին գործերի նախարարության Արխանգելսկի մարզի Օնեժսկի շրջանի ՆԳ վարչության միջոցով 2016 թվականի հունիսի 7-ից, այդ երկրի քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածի 4-րդ մասի (խարդախություն) մեղադրանքով հետախուզվող, Ռոման Անատոլիի Նագրեշնիկովին, ում նույն օրը՝ ժամը 12[15]-ին, ձերբակալել են:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Պողոսյան) 2022 թվականի փետրվարի 12-ի № ԵԴ/0092/06/22 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը, Ռոման Նագրեշնիկովի նկատմամբ 40 (քառասուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 18-ի և 2022 թվականի մայիսի 5-ի № ԵԴ/0179/06/22 որոշումներով բավարարվել է նաև Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը, Ռոման Նագրեշնիկովին հանձնելու համար 2 (երկու) ամիս ժամկետով կալանավորում կիրառելու և կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդությունները:

Հաշվի առնելով, որ Ռոման Նեգրեշնիկովի կալանքի տակ պահելու ժամկետը լրանում է 2022 թվականի սեպտեմբերի 18-ին, մինչդեռ նրա պաշտպանի կողմից վերաքննիչ բողոք է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարի 2022 թվականի մարտի 16-ի կայացրած որոշման դեմ, որի վերաբերյալ դեռևս որոշում չի կայացվել, 2022 թվականի սեպտեմբերի 6-ին միջնորդություն է ներկայացվել

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որի դատախան նիստը նշանակվել է **2022 թվականի սեպտեմբերի 14-ին՝ ժամը 16⁰⁰-ին:**

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Նկատի ունենալով, որ Ռոման Նեգրեշնիկովը չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, իսկ Վարդուհի Ավետիսի Շահինյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

7. Ռոման Նագրեշնիկովին հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ **2022 թվականի սեպտեմբերի 14-ին՝ ժամը 16⁰⁰-ին,** նշանակված դատական նիստին ռուսերեն լեզվով բանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Վարդուհի Ավետիսի Շահինյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր՝ AR սերիայի № 0537294 տրված 13.12.2017թ. 004-ի կողմից, դիպլոմ A սերիայի № 014774, ՀՀ ԱՆ № 20 տեղեկանք) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
8. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի պաշտոնակատար,
արդարադատության առաջին
դասի խորհրդական **Ա. Կոստանդյան**

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների բաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ «14» 09 2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

26 սեպտեմբերի 2022թ. քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի պաշտոնակատար, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, ուսումնասիրելով Մոլդովայի Հանրապետության քրեական օրենսգրքի 27-րդ, 46-րդ և 248-րդ հոդվածի 5-րդ մասի «ե» կետով (մաքսանենգություն) մեղադրանքով հետախուզվող, **ԱԼԵՔՍԵՅ ՎԻՏԱԼԻԻ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԻՆ (АЛЕКСЕЙ ВИТАЛЬЕВИЧ ТЮВИЛЬДИН)** հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ներկայացված միջնորդությանը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցները, 2022 թվականի օգոստոսի 18-ին, Մոլդովայի Հանրապետության (այսուհետ՝ ՄՀ) «Ինտերպոլ» ազգային կենտրոնական բյուրոյի կողմից, այդ երկրի քրեական օրենսգրքի 27-րդ, 46-րդ և 248-րդ հոդվածի 5-րդ մասի «ե» կետով (մաքսանենգություն) մեղադրանքով, 2020 թվականի դեկտեմբերի 5-ից հետախուզման մեջ գտնվելու կասկածանքով, «Զվարթնոց» օդանավակայանի ժամանման սրահում՝ ժամը 11^{00}-ին, ձերբակալել են Ռուսաստանի Դաշնության և Ռումինիայի քաղաքացի **ԱԼԵՔՍԵՅ ՎԻՏԱԼԻԻ ՏՅՈՒՎԻԼԴԻՆԻՆ**:

Նույն օրը **ԱԼԵՔՍԵՅ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԻ (АЛЕКСЕЙ ТЮВИЛЬДИН)** ձերբակալման վերաբերյալ նախապատրաստված փաստաթղթերը փոխանցվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի օգոստոսի 20-ի № ԵԴ/0831/06/22 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը՝ **ԱԼԵՔՍԵՅ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԻ (АЛЕКСЕЙ ТЮВИЛЬДИН)** նկատմամբ 40 (քառասուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին: **(ժամկետը լրանում է 27.09.2022թ. ժամը 11^{00}-ին)**:

ՀՀ գլխավոր դատախազություն 2022 թվականի սեպտեմբերի 7-ին ստացվել է ՄՀ իրավասու մարմինների միջնորդությունը՝ **ԱԼԵՔՍԵՅ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԻՆ (АЛЕКСЕЙ ТЮВИЛЬДИН)** այդ երկրի քրեական օրենսգրքի 27-րդ, 46-րդ և 248-րդ հոդվածի 5-րդ մասի «ե» կետով քրեական հետապնդման ենթարկելու նպատակով հանձնելու մասին միջնորդությունը և կից փաստաթղթերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի պահանջները պահպանելու, **ԱԼԵՔՍԵՅ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԻ (АЛЕКСЕЙ ТЮВИЛЬДИН)** հանձնման գործընթացը կազմակերպելու և իրականացնելու համար անհրաժեշտ է ժամանակ, մինչդեռ 2022 թվականի սեպտեմբերի 27-ին լրանում է նրա նկատմամբ կիրառված ժամանակավոր կալանավորման ժամկետը, ինչի համար 2022 թվականի սեպտեմբերի

22-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որի դատախան նիստը նշանակվել է **2022 թվականի սեպտեմբերի 26-ին՝ ժամը 16⁰⁰-ին:**

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ **ԱԼԵՔՍԵՅ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԸ (АЛЕКСЕЙ ТЮВИЛЬДИН)** չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, իսկ Լիանա Վաչագանի Կարապետյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. **ԱԼԵՔՍԵՅ ՏԻՈՒՎԻԼԴԻՆԻՆ (АЛЕКСЕЙ ТЮВИЛЬДИН)** հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ **2022 թվականի սեպտեմբերի 26-ին՝ ժամը 16⁰⁰-ին,** նշանակված դատական նիստին ռուսերեն լեզվով բանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Լիանա Վաչագանի Կարապետյանին (Նույնականացման քարտ (ID CARD)՝ թիվ 012581542 և դիպլոմ AB սերիայի 081738 ՀՀ ԱՆ տեղեկանք) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի պաշտոնակատար,
արդարադատության առաջին
դասի խորհրդական **Ա. Կոստանդյան**

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների բաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ ..... «26»..... 09..... 2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

05 հոկտեմբերի 2022թ. քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, ուսումնասիրելով ՌԴ իրավասու մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 228.1 հոդվածի 1-ին մասի մեղադրանքով հետախուզվող **ՆԱՏԱԼԻԱ ԱՆԱՏՈԼԻԻ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ АНАТОЛЬЕВНА КОРОЛЬКОВА)** հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, 2022 թվականի մայիսի 7-ին՝ ժամը 12^{00}-ին, «Զվարթնոց» օդանավակայանի սահմանային գոտուց, Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) ներքին գործերի նախարարության, Պրիմորսկի երկրամասի Վլադիվաստոկ քաղաքի ՆԳ վարչության Պերվոմայսկի ՆԳ բաժնի միջոցով, այդ երկրի քրեական օրենսգրքի 228.1 հոդվածի 1-ին մասի (Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի արտադրելը, իրացնելը կամ փոխադրելը) մեղադրանքով 2019 թվականի դեկտեմբերի 12-ից հետախուզման մեջ գտնվելու կասկածանքով, բաժին են բերման ենթարկել Դուբայ-Երևան թիվ 2206 չվերթի ուղևոր ՌԴ քաղաքացի **ՆԱՏԱԼԻԱ ԱՆԱՏՈԼԻԻ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ АНАТОЛЬЕВНА КОРОЛЬКОВА)**, ում նույն օրը՝ ժամը 14^{00}-ին, ձերբակալել են:

ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА) հայտնաբերման վերաբերյալ փաստաթղթերը, նույն օրը փոխանցվել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Ալեքսանյան) 2022 թվականի մայիսի 9-ի № ԵԴ/0523/06/22 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը, **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** նկատմամբ 40 (քառասուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА) հանձնելու համար կալանավորում կիրառելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության ներկայացրած միջնորդությունները Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Պողոսյան) 2022 թվականի հունիսի 13-ի և 2022 թվականի օգոստոսի 11-ի № ԵԴ/0592/06/22 որոշումները նույնպես բավարարվել է:

Այսպիսով՝ 2022 թվականի հոկտեմբերի 12-ին՝ ժամը 12^{00}-ին, լրանում է **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** կալանքի տակ պահելու ժամկետը, մինչդեռ նրա կարգավիճակը դեռևս հստակեցված չէ, հետևաբար այն խոչընդոտ է հանդիսանում հանձնման թույլատվության վերաբերյալ որոշում

կայացնելու համար, ինչի համար 2022 թվականի սեպտեմբերի 29-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որի դատախան նիստը նշանակվել է **2022 թվականի հոկտեմբերի 5-ին՝ ժամը 19⁰⁰-ին:**

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի՝ վարույթի լեզուն գրական հայերենն է:

Հաշվի առնելով, որ **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, իսկ Լիանա Վաչագանի Կարապետյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ **2022 թվականի հոկտեմբերի 5-ին՝ ժամը 19⁰⁰-ին,** նշանակված դատական նիստին ռուսերեն լեզվով բանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Լիանա Վաչագանի Կարապետյանին (Նույնականացման քարտ (ID CARD)՝ թիվ 012581542 և դիպլոմ AB սերիայի 081738 ՀՀ ԱՆ տեղեկանք) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
առաջին դասի խորհրդական Ա. Կոստանդյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների բաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ «05»..... 10..... 2022 թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

08 դեկտեմբերի 2022թ. քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, ուսումնասիրելով ՌԴ իրավասու մարմինների կողմից այդ երկրի քրեական օրենսգրքի 228.1 հոդվածի 1-ին մասի մեղադրանքով հետախուզվող **ՆԱՏԱԼԻԱ ԱՆԱՏՈԼԻԻ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ АНАТОЛЬЕВНА КОРОЛЬКОВА)** հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները, 2022 թվականի մայիսի 7-ին՝ ժամը 12⁰⁰-ին, «Զվարթնոց» օդանավակայանի սահմանային գոտուց, Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) ներքին գործերի նախարարության, Պրիմորսկի երկրամասի Վլադիվաստոկ քաղաքի ՆԳ վարչության Պերվոմայսկի ՆԳ բաժնի միջոցով, այդ երկրի քրեական օրենսգրքի 228.1 հոդվածի 1-ին մասի (Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի արտադրելը, իրացնելը կամ փոխադրելը) մեղադրանքով 2019 թվականի դեկտեմբերի 12-ից հետախուզման մեջ գտնվելու կասկածանքով, բաժին են բերման ենթարկել Դուբայ-Երևան թիվ 2206 չվերթի ուղևոր ՌԴ քաղաքացի **ՆԱՏԱԼԻԱ ԱՆԱՏՈԼԻԻ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ АНАТОЛЬЕВНА КОРОЛЬКОВА)**, ում նույն օրը՝ ժամը 14⁰⁰-ին, ձերբակալել են:

ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА) հայտնաբերման վերաբերյալ փաստաթղթերը, նույն օրը փոխանցվել են Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Ալեքսանյան) 2022 թվականի մայիսի 9-ի № ԵԴ/0523/06/22 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը, **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** նկատմամբ 40 (քառասուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА) հանձնելու համար կալանավորում կիրառելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական

շրջանի դատախազության ներկայացրած միջնորդությունները Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Ա. Պողոսյան) 2022 թվականի հունիսի 13-ի, 2022 թվականի օգոստոսի 11-ի և 2022 թվականի հոկտեմբերի 5-ի № ԵԴ/0592/06/22 որոշումները նույնպես բավարարվել է:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2022 թվականի նոյեմբերի 25-ին որոշում է կայացրել բավարարել **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով ՌԴ իրավասու մարմիններին հանձնելու մասին միջնորդությունը և թույլատրել վերջինիս հանձնումը ՌԴ իրավասու մարմիններին:

Հաշվի առնելով, որ 2022 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 12^{00}-ին, լրանում է **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** կալանքի տակ պահելու ժամկետը, մինչդեռ անհրաժեշտ է ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 479-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ վերջինիս և նրա շահերի պաշտպանի կողմից հանձնման թույլտվության վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի 2022 թվականի նոյեմբերի 25-ի որոշման հետագա բողոքարկման իրավունքը, որից հետո անդրադառնալ ՌԴ իրավասու մարմիններին վերջինիս փոխանցման հարցին, 2022 թվականի դեկտեմբերի 1-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան, որի դատախան նիստը նշանակվել է **2022 թվականի դեկտեմբերի 8-ին՝ ժամը 17^{00}-ին:**

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի՝ վարույթի լեզուն գրական հայերենն է:

Հաշվի առնելով, որ **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՆ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, իսկ Աստղիկ Գևորգյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. **ՆԱՏԱԼԻԱ ԿՈՐՈԼԿՈՎԱՅԻ (НАТАЛЬЯ КОРОЛЬКОВА)** հանձնման նպատակով կալանավորման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ **2022 թվականի դեկտեմբերի 8-ին՝ ժամը 17^{00}-ին,** նշանակված դատական նիստին ռուսերեն լեզվով բանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Աստղիկ Ռուբենի Գևորգյանին (Նույնականացման քարտ (ID CARD)՝ թիվ 010460871) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական

դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական **Ա. Կոստանդյան**

Սրացա տույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ Ի. Գեբրեյ «08»....12..... 2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

06 դեկտեմբերի 2022թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, ուսումնասիրելով Իրանի Իսլամական Հանրապետության քրեական օրենսգրքի 656-րդ հոդվածի (գողություն) մեղադրանքով հետախուզվող **ԱԲՈԼՖԱԶԼ ՄՈՀՍԵՆԻ ԱՆՍԱՌԻՆ (ABOLFAZL MOHSEN ANSARI)** նկատմամբ հանձնելու համար կալանավորում կիրառելու վերաբերյալ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան ներկայացված միջնորդությանը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի աշխատակիցները, Իրանի Իսլամական Հանրապետության (այսուհետ՝ ԻԻՀ) «Ինտերպոլ» ազգային կենտրոնական բյուրոյի կողմից, այդ երկրի քրեական օրենսգրքի 656-րդ հոդվածի (գողություն) մեղադրանքով, 2020 թվականի փետրվարի 6-ից հետախուզման մեջ գտնվելու կասկածանքով, «Զվարթնոց» օդանավակայանի ժամանման սրահում, 2022 թվականի նոյեմբերի 13-ին՝ ժամը 07[30]-ին, ձերբակալել և բաժին են տեղափոխել Ստամբուլ-Երևան թիվ 550 չվերթի ուղևոր, Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի **ԱԲՈԼՖԱԶԼ ՄՈՀՍԵՆԻ ԱՆՍԱՐԻՆ (ABOLFAZL MOHSEN ANSARI)**, ում նույն օրը՝ ժամը 10[00]-ին, ձերբակալել և տեղափոխել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ձերբակալվածների պահման վայր:

ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻ (ABOLFAZL ANSARI) ձերբակալման վերաբերյալ փաստաթղթերը Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն է ստացվել 2022 թվականի նոյեմբերի 14-ին:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Տաթևիկ Մուրադյան) 2022 թվականի նոյեմբերի 15-ի № ԵԴ/1371/06/22 որոշմամբ **ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻ (ABOLFAZL ANSARI)** նկատմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 30 օր ժամկետով (լրանում է **2022 թվականի դեկտեմբերի 12-ին՝ ժամը 07[30]-ին, որոշման պատճենը կցվում է**):

ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ստացվել է **ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻ (ABOLFAZL ANSARI)** հանձնման արարողակարգում անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է ժամանակ, **ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻ (ABOLFAZL ANSARI)** հանձնման մասին միջնորդությունը քննարկելու, անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ հարցումներ կատարելու, ստացված պատասխանների հիման վրա համապատասխան որոշում կայացնելու համար, 2022 թվականի դեկտեմբերի 5-ին միջնորդություն է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ **ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻ (ABOLFAZL ANSARI)**

հանձնման նպատակով կալանավորելու մասին, որի վերաբերյալ դատական նիստը նշանակվել է **2022 թվականի դեկտեմբերի 6-ին՝ ժամը 17⁰⁰-ին:**

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻ (ABOLFAZL ANSARI)չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, իսկ Ռոբերտ Թահմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. ԱԲՈԼՖԱԶԼ ԱՆՍԱՐԻ (ABOLFAZL ANSARI) հանձնման նպատակով կալանավորելու վերաբերյալ **2022 թվականի դեկտեմբերի 6-ին՝ ժամը 17⁰⁰-ին, նշանակված դատական** նիստին պարտկերեն բանավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Ռոբերտ Լևոնի Թահմասյանին (անձնագիր՝ AU սերիայի թիվ 0494895, տրված 11.11.2021թ., 007-ի կողմից, ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված թարգմանչի թիվ 101 վկայական) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
առաջին դասի խորհրդական **Ա. Կոստանդյան**

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների բաղկացությունը: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝ «06» 12 2022թ.

Ռ. Թահմասյան